ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 397-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2021 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 16-00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

2. Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

4. Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

5. Ալավերդի համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների 2021 թվականի տարեվերջյան գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 22

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 398-Ա

ԴԵԲԵԴ ԹԱՂԱՄԱՍ, N 19/5 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակարանն ու կատարված ձևափոխությունը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Ալվարդ Կոնյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության վկայագիրը, ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված շինությունների հատակագծերը, «ԹԻՎ 1 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 30.11.2021թ. N 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալվարդ Կոնյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 19/5 հասցեում գտնվող բնակարանին կից՝ 1996թ. ինքնակամ կառուցված 7.35 քմ արտաքին մակերեսով (6.6 ներքին մակերեսով) բնակարանը ճանաչել օրինական:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 26-րդ կետի համաձայն նշված բնակարանում կատարված 1 հատ պատուհանի ձևափոխությունը ճանաչել օրինական:
3. Օրինականացված 7.35 քմ արտաքին մակերեսով շինությունների զբաղեցրած հողամասի նկատմամբ կիրառվում է շենքի բնակարանների և ոչ բնակելի

տարածքների սեփականատերերին անհատույց՝ բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու վերաբերյալ նորմերը:

4. Օրինականացված բնակարանի և ձևափոխված պատուհանի համար սահմանված վճարը ընդհանուր՝ 3526 (երեք հազար հինգ հարյուր քսանվեց) դրամ գումարի չափով, սահմանված ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 22
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 399-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 07.12.2021թ. N 366-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 17122021-06-0058 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Սիլվա Սուրենի Պետրոսյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 3/13 շենք, 12 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 07.12.2021թ. N 366-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 105.23 քմ արտաքին մակերեսով (88.6 քմ ներքին մակերեսով) տնտեսական

սենյակով ավտոտնակը՝ 108176 (հարյուր ութ հազար հարյուր յոթանասունվեց) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00545 հա մակերեսով հողամասը՝ 43164 (քառասուներեք հազար հարյուր վաթսունչորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Սիլվա Սուրենի Պետրոսյանին:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 22

ք. Ալավերդի